Պարոն՝ Ս. Աղինյանին

Խնդրում եմ նախապատրաստել հակիրճ զեկույց՝ գործակարգավարական խորհրդակցությանը ներկայացնելու համար

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախագահ պարոն Գ.Բաղրամյանին

Տիկին Ն.Գաբրիելյանին՝ Ի գիտություն

Գ.Բաղրամյան

« 11 » դեկտեմբերի 2023թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023 թվականի դեկտեմբերի 4-ին Արաբական Միացյալ Էմիրությունների Դուբայ քաղաքում Կողմերի 28-րդ կոնֆերանսի (COP28) շրջանակներում կայացած փոքր հզորության ատոմային կայանների ռուսական դիզայնի յուրահատուկ տեխնոլոգիաների ծանոթության նպատակով կազմակերպված միջոցառմանը մասնակցության

1. **Մասնակցի անունը, ազգանունը՝** Սերգեյ Աղինյան:
2. **Զբաղեցրած պաշտոնը՝** ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի անդամ:

3.Գործուղման վայրը և ժամկետները՝ 2023 թվականի դեկտեմբերի 3-ից 5-ը Արաբական Միացյալ Էմիրությունների Դուբայ քաղաք:

4.Հրավիրող կողմը՝ «Ռոսատոմ Էներջի Փրոջեքթս» բաժնետիրական ընկերություն:

5.Գործուղման նպատակը՝ Մասնակցել 2023 թվականի դեկտեմբերի 4-ին Արաբական Միացյալ Էմիրությունների Դուբայ քաղաքում կողմերի 28-րդ կոնֆերանսի (COP28) շրջանակներում կայացած փոքր հզորության ատոմային կայանների ռուսական դիզայնի յուրահատուկ տեխնոլոգիաների ծանոթության նպատակով կազմակերպված միջոցառմանը:

6.Քննարկված թեմաները՝ Միջոցառման ընթացքում ներկայացվել են կայուն զարգացման կլիմայական նպատակների հասնելու և ածխածնային արտանետումների քիչ քանակի ապահովման նպատակով ստեղծված ռուսական տեխնոլոգիական լուծումների ամբողջական շրջանակ:

Միջոցառումը բացվել է «Ռոսատոմ Էներջի Փրոջեքթս» բաժնետիրական ընկերություն գլխավոր տնօրեն Ա.Ե.Լիխաչովի խոսքով, որին հաջորդել է Համաշխարհային միջուկային ասոցիացիայի (WNA) գլխավոր տնօրեն Սամա Բիլբաո-ի-Լեոի ելույթը:

Այնուհետև «Ռոսատոմ Էներջի Փրոջեքթս» բաժնետիրական ընկերության զարգացման և միջազգային ձեռնարկատիրական գործունեության բլոկի գլխավոր տնօրենի առաջին տեղակալ Կ.Բ.Կոմարովը ներկայացրեց իրենց կողմից իրականացվող ծրագրերի վերաբերյալ հակիրճ տեղեկատվությունը:

Մասնավորապես նշվեց, որ ապագա տարիներին ատոմային էներգիան հանդիսանալու է ածխածնային հավասարակշռության ապահովման հիմք, իսկ փոքր հզորության կայաններում ատոմային էներգիայի արտադրությունը, որպես հուսալի տեխնոլոգիական լուծում, մեծ դեր է խաղում էկոլոգիական հիմնախնդիրների լուծման և ածխածնային արտանետումների նվազեցման հարցերում: Նշվեց, որ «Ռոսատոմ Էներջի Փրոջեքթս» բաժնետիրական ընկերության առաջարկած տեխնոլոգիական լուծումները արդյունավետ կերպով կարող են նվազեցնել այն երկրների ածխածնային արտանետումները, որոնք նախկինում իրենց սեփական կարիքների բավարարման համար չեն դիտարկել ատոմային էներգիայի արտադրությունը:

Միևնույն ժամանակ նշվեց, որ վերոնշյալ լուծումներով փոքր հզորության ատոմային էներգիայի արտադրության յուրահատուկ կայան արդեն իսկ կառուցվել է Ռուսաստանի Դաշնության Յակուտիա Հանրապետությունում:

Նշված կայանը, որի նպատակն է խթանել տարածաշրջանի զարգացումը, կառուցվել է արկտիկական փխրուն էկոհամակարգի առանձնահատկությունները հաշվի առնելով: Յակուտիայում ցամաքային փոքր հզորության ատոմային էներգիայի արտադրության կայանի գործարկումը նախատեսվում է 2028 թվականին: Բացի ներկայացված նախագծից, «Ռոսատոմ Էներջի Փրոջեքթս» բաժնետիրական ընկերության նախագծերի պորտֆելը ներառում է նաև աշխարհի միակ լողացող ատոմակայանի՝ «Ակադեմիկ Լոմոնոսովի» կառուցումը: 2019 թվականի վերջին կոմերցիոն շահագործման մեկնարկից ի վեր լողացող

ատոմակայանը ավելի քան 700 միլիոն կվտ/ժամ էլեկտրաէներգիա է արտադրել Ռուսաստանի Պևեկ քաղաքի համար: Այս փորձի հիման վրա աշխատանքներ են տարվում, որոնք ուղղված են РИТМ-200 ռեակտորների վրա հիմնված լողացող էներգաբլոկների նոր սերնդի տեխնոլոգիայի զարգացմանը: Նախատեսվում է, որ մինչև 2029 թվականը այս տեխնոլոգիայով կառուցված էներգոբլոկները կսկսեն էներգիա մատակարարել Չուկոտկայի Բայմսկայա հանքաքարի գոտու զարգացման համար: Ռոսատոմը նաև իրականացնում է մինչև 35 ՄՎտ հզորությամբ «Шельф-М» միկրոռեակտորի նախագիծը: Այս տեխնոլոգիայի վրա հիմնված առաջին կայանը կգործարկվի մինչև 2030 թվականը:

7.Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝ Միջոցառման ընթացքում հանձնաժողովի ներկայացուցիչները հանդիպում են ունեցել «Ռոսատոմ Էներջի Փրոջեքթս» բաժնետիրական ընկերության առանցքային հաճախորդների գծով տնօրեն՝ Ալեքսանդրա Օվչարենկոյի հետ, որի ընթացքում քննարկվել են երկկողմ համագործակցության հնարավորությունները:

8.Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝ Հաշվի առնելով միջոցառման ընթացքում ներկայացված տեղեկատվությունը, ինչպես նաև կայացած քննարկումները և հանդիպումները՝ առաջարկում եմ շարունակել առաջավոր միջազգային փորձի ուսումնասիրությունը, այդ թվում՝ «Ռոսատոմ Էներջի Փրոջեքթս» բաժնետիրական ընկերության կողմից կառուցվող փոքր հզորության կայաններում ատոմային էներգիայի արտադրությունը մասով, անհրաժեշտության և հնարավորության դեպքում հետագայում Հայաստանի Հանրապետությունում դրանք ներդնելու նպատակով:

ՀՀ հանրային ծառայությունները
կարգավորող հանձնաժողովի անդամ՝ ***Սերգեյ Աղինյան***
11.12. 2023թ

Հավելված N 3

ՀՀ վարչապետի 2018 թ.

սեպտեմբերի 19-ի N 1230-Ն

որոշման

Օրինակելի ձև

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՁՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը Հրաման 1121-ՀՆ, 23.11.2023թ.

3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը)

Հանձնաժողովի նախագահ **Գարեգին Բաղրամյան**

Հանձնաժողովի անդամ **Սերգեյ Աղինյան**

(*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*)

4. Գործուղման վայրը Դուբայ / Արաբական Միացյալ Էմիրություններ /

5. Գործուղման ժամկետները 03.12.2023 - 05.12.2023թթ.

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝ ՀՀ պետական բյուջե

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը

(*թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն*)

---

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը՝ ճանապարհածախս , գիշերավարձ և օրապահիկ

(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)

(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)

□ ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

□ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		*Գարեգին Բաղրամյան*	*Սերգեյ Աղինյան*	Ընդամենը (հազ. դրամ)
Ճանապար-հածախս	Ավիածառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)			
	Ավիատոմսի արժեքը (դրամ)	159,020.00	159,020.00	318.040
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով՝դոլար)	207	207	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	83510.01	83510.01	
	Օրերի քանակը	2	2	
	Ընդամենը (դրամ)	167,020.02	167,020.02	334.040
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով՝ դոլար)	127	127	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	51,076.86	51,076.86	
	Օրերի քանակը	3	3	
	Ընդամենը (դրամ)	153,231	153,231	306.461
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար			
	Մուտքի արտոսագրի վճար		30,257	30.257
	Այլ ծախսեր (*նկարագրել*)			
Ընդ.ամենը ծախսեր (հազ. դրամ)		479.271	509.528	988.798

Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը,

(հավելվածը լրաց. 23.03.23 N 326-Ն)

Ամսաթիվ 07.12.2023թ.